



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՔՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Կիրակի, 18 Դեկտեմբերին, Եպիսկոպոսական Ս. Պատարագ պիտի մատուցուի Քրեսենթա Հովիտի Հայց. Առաք. Եկեղեցւոյ համայնքին համար, Ազգ. Առաջնորդարանին մէջ:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանը:

Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազանին հովանաւորութեամբ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրաքահայ մտաւորականներու եւ ազգային գործիչներու յիշատակին:

Իսկ Պատարագէն ետք, նոյն վայրին մէջ, կազմակերպութեամբ Եկեղեցւոյ դաստիարակչական յանձնախումբին, ձեռնարկ մը տեղի պիտի ունենայ:

Բանախօսն է Տոքթ. Վեհուհի Մինասեան. պիտի ներկայացնէ «Իրաքահայ գաղութը, անցեալը, ներկան եւ ապագան» նիւթը: Պիտի պատուընդունի իրաքահայերու Ազգային Վարչութեան նախկին անդամներ:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը:

### PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT THE CRESCENTA VALLEY PARISH

On Sunday, December 18, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at the Armenian Apostolic Church of Crescenta Valley.

Divine Liturgy begins at 11:00 a.m. at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

Requiem will also be held in memory of Iraqi-Armenian intellectuals and public servants.

After the service, at 1:00 p.m., a lecture on "The Iraqi-Armenian Community: Past, Present, and Future" will be held at the same hall. The event, which is organized by the Crescenta Valley Parish Education Committee,

features keynote speaker Dr. Vahoni Minassian and will honor former Iraqi-Armenian Diocese Central Executive Council members.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Կ՝ՈՂՋՈՒՆԷ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԷ ԹԻՒ 306 ԲԱՆԱԾԵԼԻՆ ՈՐՂԵԳՐՈՒՄԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 14 Դեկտեմբերին, գոհունակությամբ արձանագրեց ամերիկեան խորհրդարանին կողմէ թիւ 306 բանաձեւին որդեգրման համար:

Թուրքիոյ մէջ կրօնքի ազատութիւն եւ եկեղեցական գրաւեալ կալուածները իրենց սկզբնական տէրերուն վերադարձը պահանջող բանաձեւը Երեքշաբթի, 13 Դեկտեմբերին քուէարկութեամբ որդեգրուեցաւ Ներկայացուցիչներու տան կողմէ: Զանի մը ամիս առաջ, օրինագիծը որդեգրուած էր արտաքին յարաբերութեանց յանձնախումբին կողմէ, 1ի դեմ 43 քուէով: Բանաձեւը Թուրքիոյ իշխանութիւններէն կը պահանջէ քրիստոնէայ փոքրամասնութեանց պատկանած եկեղեցիներ ու աղօթավայրեր, որոնց շարքին հայկական եկեղեցական կոթողներ ու դարաւոր ժառանգութիւններ վերադարձուիլն իրենց տէրերուն:

«Կ՝ողջունենք այս բանաձեւին որդեգրումը, որ կարելոյ յառաջիսողացք է ոչ միայն հայերու, այլ նաեւ բոլոր անոնց համար, որոնք հետամուտ են կրօնական ազատութեանց, հաւասարութեան ու արդարութեան: Կը յուսանք, որ այս պահանջը իրականութիւն դառնայ եւ մեր եկեղեցական իրաւունքները վերադարձուիլն պահանջատէր սեփականատիրոջ՝ մեր ժողովուրդի զաւակներուն», յայտարարեց Առաջնորդ Սրբազանը, միաժամանակ բարձր գնահատելով այս բանաձեւին պատրաստութեան ու հետապնդման նուիրեալները:

## **PRELATE SALUTES PASSAGE OF HOUSE RESOLUTION 306**

On Tuesday, December 13, 2011, the ANCA reported that the U.S. House of Representatives adopted a landmark religious freedom measure, H. Res. 306, calling on Turkey to return Christian Church properties it stole through genocide, and to end its oppression of Christian minorities in present-day Turkey.

"We were overjoyed to learn of the passage of H. Res. 306. This is indeed a monumental victory not only for the Armenian people but for all those who value religious freedom, equality, and justice. We hopefully anticipate the end of religious and ethnic discrimination and await the day when our sacred sites are returned to their rightful owners, the Armenian people" stated H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

\*\*\*

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԻՄՆՍԱՅԻՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ  
«ՀՐԱՇԱՓԱՌ»Ի ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ**

Շաբաթ, 17 Դեկտեմբերի երեկոյեան, ընդառաջելով Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Լոս Անճելըսի ժողովրդապետութեան հրաւերին, Առաջնորդ Սրբազանը Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ ներկայ պիտի «Հրաշափառ»ի արարողութեան ու ողջոյնի հանդիսութեան, որ կազմակերպուած է Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Նորընտիր Առաջնորդ Գերշ. Ս. Միքայէլ Եպսկ. Մուրատեանի Լոս Անճելըս այցելութեան առիթով: Առաջնորդ Սրբազանին պիտի ընկերանայ Զրեմենթա Հովիտի Հայց. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ղեւոնդ Քիւյ. Զիրազեան:

**PRELATE TO ATTEND "HRASHAPAR" SERVICE FOR HIS  
EXCELLENCY BISHOP MIKAEL MOURADIAN**

St. Gregory the Illuminator Armenian Catholic Church has organized a welcoming ceremony in honor of His Excellency Bishop Mikael Mouradian, Eparch of the Armenian Catholic Church for the USA and Canada. The event will be held on the evening of Saturday, December 17 at St. Gregory Church.

"Hrashapar" Service will be held inside the Church in honor of His Excellency, followed by a reception at the adjacent Kouyoumjian Hall.

The Prelate, accompanied by Rev. Fr. Ghevont Kirazian, will attend the ceremony.

\*\*\*

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Ս.Ը.Մ.Ի «ԱՐԱՐԱՏ»  
ՄԱՍՆԱԾԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 13 Դեկտեմբերի երեկոյեան, Ազգ. Առաջնորդարանի «Սիւլահեան» դահլիճին մէջ ընդունեց այցելութիւնը Հ.Ս.Ը.Մ.Ի «Արարատ» մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչներուն, գլխաւորութեամբ

վարչութեան ատենապետուհին՝ Տիկին Յելիկ Իսաղուլեանի: Հանդիպումին մասնակից եղան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներէն Տիար Վիգէն Դաւիթեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան ու անդամ Տիար Վահան Պզտիկեան:

Հիւր վարչականները եկած էին Առաջնորդ Սրբազանին շնորհակալութիւն յայտնելու՝ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական այցելութեան առիթով, մասնաճիւղի հիմնադրութեան 33ամեակի տօնախմբութեան Նորին Ս. Օծութեան Ներկայութեան ու պատգամին համար: Անոնք նաեւ տեղեկութիւններ տուին մասնաճիւղի գործունեութեան ու ծրագիրներուն մասին, մանաւանդ, որ Հ.Մ.Ը.Մ.ի այս կենսունակ անդամը վերջերս ընտրած է նոր վարչութիւն: Ներկայացուցիչները այս առիթով Առաջնորդ Սրբազանը հրաւիրեցին մասնաճիւղին կազմակերպած երգահանդեսին, որ նախատեսուած է Կիրակի, 18 Փետրուարի յետմիջօրէին, կատարողութեամբ անուանի երգչուհի Իգապէլ Պայրագտարեանի, դաշնակի ընկերակցութեամբ Սերուժ Գրաճեանի: Տիար Վիգէն Դաւիթեան, իր կարգին, լուսաբանութիւններ տուաւ մասնաճիւղի գործունեութեան տարիներու ընթացքին արձանագրած բարելաման ու իրագործման միջոցներուն մասին, նշելով, որ շուրջ 2,000 անդամ հաշուող մասնաճիւղը կը գործէ արիեստավարժ մօտեցումով:

Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան ատենապետուհին գնահատանքով արտայայտուեցան «Արարատ» մասնաճիւղի Հ.Մ.Ը.Մ.ական առաքելութեան մասին եւ մաղթեցին նորանոր նուաճումներ: Անոնք նաեւ վեր առին Ազգ. Առաջնորդարանին ու Հ.Մ.Ը.Մ.ին միջեւ արդիւնաւոր գործակցութեան փորձառութիւնը եւ հաստատեցին, թէ այս գործակցութիւնը պիտի շարունակուի ի նպաստ նոր սերունդին առողջ դաստիարակութեան:

Հանդիպումի աւարտին, հիւր ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազանին յանձնեցին գեղեցիկ կազմով Աստուածաշունչ մը:

## HOMENETMEN "ARARAT" CHAPTER BOARD MEMBERS VISIT THE PRELACY



On Tuesday, December 13, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, met with Homenetmen "Ararat" Chapter board members at the Prelacy "Sulahian" Reception Hall. The delegation was led by Chapter Chairlady Mrs. Helik Issagholian. Homenetmen Central Executive member Mr. Vicken Tavitian,

Executive Council Chair Mrs. Rima Boghossian and member Mr. Vahan Bezdikian participated in the meeting.

The guests first and foremost thanked the Prelate for the visit of His Holiness Catholicos Aram I to the "Ararat" Chapter in October on the occasion of their 33<sup>rd</sup> anniversary. The guests also reported on the current and future endeavors of their chapter. Mr. Vicken Tavitian further elaborated on the successes of the "Ararat" Chapter in recent years, noting that it counts more than 2,000 members. The guests also invited the Prelate to the concert they have organized on Sunday, December 18 featuring Isabel Bayrakdarian and Serouj Kradjian.

The Prelate and Mrs. Rima Boghossian both commended the members for their service and wished them success in future endeavors and missions, as well as reaffirmed that the collaboration between the Prelacy and Homenetmen will remain strong and continue for years to come.

At the conclusion of the meeting, the guests presented the Prelate with a beautiful illustrated Bible.

\*\*\*

## ԱՐԵՎԷԼԵԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՅԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ



Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու Խորհուրդը, յանձինս Հայ Առաքելական, Ղրպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու, Երեքշաբթի, 13 Դեկտեմբեր 2011ին, իր հերթական ժողովը գումարեց Ս Մարիամ եւ Ս. Աթանաս Եկեղեցւոյ մէջ, Նորթրիճ:

Առաւօտեան ժամը 11-ին, Առաջնորդ Սրբազան

Հայրեր՝ Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Գերշ. Տ. Եուճին Քափլան (Ասորի Ուղղափառ), եւ Գերշ. Տ. Սրապիոն Եպսկ. (Ղրպտի Ուղղափառ), իրենց ընկերակցող եկեղեցական հայրերու մասնակցութեամբ կարճ արարողութիւն մը կատարելէ ետք, անցան տարեկան ծրագրի մշակման աշխատանքներուն: Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Հովիւ, Արժ. Տ. Ռազմիկ Քիւյ. Խաչատուրեան եւ Զրեմեմեթ Հովիտի Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Ղեւոնդ Քիւյ. Զիրազեան:



Ժողովը քննարկեց յառաջիկայ միատեղ ծրագիրներու եւ աշխատանքներու կարելիութիւնները, ապա լսեց Ուղղափառ եկեղեցիներու կիրակնօրեայ վարժարաններու եւ երիտասարդաց յանձնաժողովներու զեկոյցները:

Ժողովը գնահատանքով արտայայտուեցաւ միջ-կիրակնօրեայ դպրոցներու յանձնախումբին տարած աշխատանքներուն, ինչպէս նաեւ կազմակերպած միջ-կիրակնօրեայ դպրոցներու տարեկան հաւաքին, որ տեղի ունեցած էր Շաբաթ, 19 Նոյեմբեր 2011ին, Ս. Եփրեմ Ասորի Ուղղափառ Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ, որուն մասնակցեցան 160 աշակերտներ:



Թելադրուեցաւ Ուղղափառ եկեղեցիներու Միջ-երիտասարդաց յանձնախումբը աշխուժացնէ իր գործունեութիւնը եւ նախորդ տարիներու նման, յառաջիկայ ամիսներու ընթացքին, դաստիարակչական ծրագրով օգտաշատ հաւաքներ կազմակերպէ:

Հաւաքական ճաշով, յիշատակի հաւաքական նկարով եւ աղօթքով փակուեցաւ ժողովը:

Յայտնենք, որ Ազգային Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակը եւ Կիրակնօրեայ Վարժարաններու Վարիչ Մարմինը, հովանաւորութեամբ եւ գլխաւորութեամբ թեմիս Առաջնորդ Սրբազան Զօր, արդէն իսկ ծրագրումի նախնական աշխատանքներու ձեռնարկած են, լաւագոյնս մասնակցելու համար Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու կիրակնօրեայ վարժարաններու եւ միջ-երիտասարդական հաւաքներուն:

## PRELATE PARTICIPATES IN COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS MEETING



On Tuesday, December 13, 2011, the Council of Oriental Orthodox Bishops held their quarterly meeting at St. Mary and St. Athanasius Coptic Orthodox Church in Northridge, hosted by H.G. Bishop Serapion.

The day began with a prayer service inside the Church led by the Prelates H.E. Archbishop Moushegh Mardirossian, H.E. Archbishop

Mor Clemis Eugene Kaplan, and H.G. Bishop Serapion, and with the participation of clergy members from the three Churches.

Alongside the Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian, Rev. Fr. Razmig Khatchadourian, and Rev. Fr. Ghevont Kirazian participated in the meeting.

The meeting focused on collaborative efforts and joint events in the coming year, and after hearing reports on Sunday School and Youth activities, made the following comments.

(1) The Council commended the activities of the Sunday School committee, including their most recent endeavor, the Oriental Orthodox Churches 7<sup>th</sup> annual Bible competition in which 160 youth participated. The event was held on Saturday, November 18, 2011 at St. Ephraim Syriac Orthodox Cathedral in Burbank.

(2) The Council will work to reorganize and revitalize the Youth committee, and hopes they will begin to hold events regularly as in the past.

The meeting concluded with a lunch reception.

\*\*\*